ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-17/20-2>>

ք. Երևան <<26>> <<հուլիս>> 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «ԱԲԻ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Քեշիշյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված անվադողեր, մարտկոցներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 6306526 (վեց միլիոն երեք հարյուր վեց հազար հինգ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցներ Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«ԱԲԻ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք. Երևան,Նորք 11-րդ փող. Տուն 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 163008129278
ՀԿՀՀ 02505554	ՀԿՀՀ 01526588
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ g.keshishyan@mail.ru
	հեռ. (010)652807
Գ. Բեգլարյան	Գ. Քեշիշյան

Հավելված N 1
<<26>> <<հուլիս>> 2017թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-17/20-2 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

ՀՀ դրամ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագրերը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը	Գումարը
2	Օդի զտիչ	Նախատեսված TOYOTA C 200 4.0 vin-JTMHU09J7D4064988 2012թ. ա/մ համար, կոդը՝ 17801-38030	հատ	3	7488	22464
9	Գեներատորի փոկ	Նախատեսված TOYOTA C 200 4.0 vin-JTMHU09J7D4064988 2012թ. ա/մ համար	հատ	1	14400	14400
10	Կայծամոմ	Նախատեսված TOYOTA C 200 4.0 vin-JTMHU09J7D4064988 2012թ. ա/մ համար, կոդը՝ 90919-02256	հատ	8	6000	48000
18	Ապակեմաքրիչի խոզանակ աջ	Նախատեսված TOYOTA C 200 4.0 vin-JTMHU09J7D4064988 2012թ. ա/մ համար, կոդը՝ 85222-53071	հատ	1	9000	9000
19	Ապակեմաքրիչի խոզանակ	Նախատեսված TOYOTA C 200 4.0 vin-JTMHU09J7D4064988 2012թ. ա/մ համար, կոդը՝ 85222-42110	հատ	1	9000	9000
20	Օդի զտիչ	Նախատեսված LX-470 զրահապատ vin-JTJHT00W174029330 2007թ. ա/մ համար, կոդը՝ 17801-17020	հատ	1	7740	7740
22	Արգ. կոճղակներ հետևի	Նախատեսված LX-470 զրահապատ vin-JTJHT00W174029330 2007թ. ա/մ համար, կոդը՝ 04466-60070	հավաքածու	5	24000	120000
33	Կայծամոմ	Նախատեսված LX-470 զրահապատ vin-JTJHT00W174029330 2007թ. ա/մ համար, կոդը՝ 90919-02249	հատ	8	6600	52800
36	Դիմապակի	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հատ	1	46500	46500
41	Արգ. կոճղակներ առջևի	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հավաքածու	10	33000	330000
42	Արգ. կոճղակներ հետևի	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար, կոդը՝ 44060-ED026	հավաքածու	4	31500	126000
44	Առջևի կայունարարի կանգնակ	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ	հատ	8	9000	72000

		համար54618-JX00A				
45	Առջևի լծակի վռան	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար, կոդը՝ 54570-BB00A	հատ	12	4800	57600
47	Առջևի արգ. սկավառակ	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար, կոդը՝ 40206-EE320	հատ	6	43500	261000
48	Առջևի մեղմիչ աջ	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար, կոդը՝ E4302-IJY0A	հատ	2	73500	147000
56	Շարժիչի գոգնոցի խցան	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հատ	2	2400	4800
60	Գեներատորի փոկ	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հատ	3	11904	35712
68	Ծայրակալ հոդակապով աջ	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար, կոդը՝ D8520-EW00A	հատ	2	11940	23880
69	Ծայրակալ հոդակապով ձախ	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար, կոդը՝ D8640-EW00A	հատ	2	11940	23880
76	Դիմապակու խոզանակ վարորդ	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար, կոդը՝ 28890-EE900	հատ	8	11970	95760
78	Խոզանակի ժապավեն	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հավաք ածու	5	3900	19500
81	Առջևի շարժաբեր հոդակապեր աջ կողմի	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հավաք ածու	1	90000	90000
82	Առջևի շարժաբեր հոդակապեր ձախ կողմի	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հավաք ածու	1	90000	90000
84	Շարժիչի հովացուցիչ	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հատ	1	84000	84000
89	Ապակի լվացոխ սարք	Նախատեսված NISSAN TIIDA vin-JN1CC11D99T000458 2009թ. ա/մ համար	հատ	1	28800	28800
90	Սրահի զտիչ	Նախատեսված NISSAN MAXIMA 3.0 vin-JN1CA31C44T732546 2004թ. ա/մ համար, կոդը՝ 27274-4Y125	հատ	1	6600	6600
100	Վառոցքի կոճ	Նախատեսված NISSAN MAXIMA 3.0 vin-JN1CA31C44T732546 2004թ. ա/մ համար, կոդը՝ 22448-24007	հատ	2	12500	25000
103	Խոզանակի ժապավեն	Նախատեսված NISSAN MAXIMA 3.0 vin-JN1CA31C44T732546 2004թ. ա/մ համար	հավաք ածու	2	3450	6900
104	Ջրի պոմպ	Նախատեսված NISSAN MAXIMA	հատ	1	24900	24900

		3.0 vin-JN1CA31C44T732546 2004թ. ա/մ համար, կոդը՝ 21010-31U85				
121	Գեներատորի փոկ	Նախատեսված HYUNDAI TUCSON 2.7 vin-KMHJM81D79U950401 2008թ.ա/մ համար	հատ	2	10500	21000
124	Վառոցքի կոճ	Նախատեսված HYUNDAI TUCSON 2.7 vin-KMHJM81D79U950401 2008թ.ա/մ համար, կոդը՝ 27410-37100	հատ	4	15000	60000
132	Ջեռ. հովացուցիչ	Նախատեսված HYUNDAI TUCSON 2.7 vin-KMHJM81D79U950401 2008թ.ա/մ համար	հատ	2	70500	141000
137	Խոզանակի ժապավեն	Նախատեսված HYUNDAI TUCSON 2.7 vin-KMHJM81D79U950401 2008թ.ա/մ համար	հավաք ածու	5	3900	19500
138	Ջրի պոմպ	Նախատեսված HYUNDAI TUCSON 2.7 vin-KMHJM81D79U950401 2008թ.ա/մ համար25100-37202	հատ	2	26400	52800
139	Շարժիչի. հովացուցիչ	Նախատեսված HYUNDAI TUCSON 2.7 vin-KMHJM81D79U950401 2008թ.ա/մ համար	հատ	1	93000	93000
140	Ապակեմաքրիչի խոզանակներ	Նախատեսված HYUNDAI TUCSON 2.7 vin-KMHJM81D79U950401 2008թ.ա/մ համար	հավաք ածու	3	15000	45000
141	Առջևի անվակունդի առանցքակալ	Նախատեսված HYUNDAI TUCSON 2.7 vin-KMHJM81D79U950401 2008թ.ա/մ համար	հատ	4	18000	72000
148	Արգ. կոճղակներ առջևի	Նախատեսված HYUNDAI ELANTRA vin-KMHD441DBAU854390 2009թ. ա/մ համար, կոդը՝ 58101-3XA00	հավաք ածու	20	33000	660000
149	Արգ. կոճղակներ հետևի	Նախատեսված HYUNDAI ELANTRA vin-KMHD441DBAU854390 2009թ. ա/մ համար, կոդը՝ 58302-2EA00	հավաք ածու	15	30000	450000
170	Առջևի մեղմիչ ձախ	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար, կոդը՝ 54651-3X250	հատ	2	51000	102000
171	Առջևի մեղմիչ աջ	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար, կոդը՝ 54661-3X250	հատ	2	51000	102000
176	Հոդակապով ծայրակալ աջ	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար, կոդը՝ 56820-3X090	հատ	2	11040	22080
177	Հոդակապով ծայրակալ ձախ	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար, կոդը՝ 56820-3X001	հատ	2	11040	22080
183	Անվակունդի հեղուս և մանեկ	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108	հավաք ածու	24	3450	82800

		2012թ. ա/մ համար				
192	Խոզանակի ժապավեն	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար	հավաք ածու	5	3900	19500
195	Առջևի արգ. սկավառակ	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար	հատ	2	53400	106800
196	Հետևի արգ. սկավառակ	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար	հատ	2	47700	95400
197	Առջևի շարժաբեր հոդակապեր աջ կողմի	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար	հավաք ածու	1	63000	63000
198	Առջևի շարժաբեր հոդակապեր ձախ կողմի	Նախատեսված HYUNDAI ELANTRA 1.8 vin-KMHDH41EBCU370108 2012թ. ա/մ համար	հավաք ածու	1	63000	63000
210	Արգ. կոճղակներ առջևի	Նախատեսված HYUNDAI H-1 TQ /միկրոավտոբուս/ vin-KMJWA37RAAU231589 2010թ. համար, կոդը՝ 58101-4HA50	հավաք ածու	1	37500	37500
211	Արգ. կոճղակներ հետևի	Նախատեսված HYUNDAI H-1 TQ /միկրոավտոբուս/ vin-KMJWA37RAAU231589 2010թ. համար, կոդը՝ 58302-4HA50	հավաք ածու	1	33000	33000
214	Առջևի կայունարարի կանգնակ	Նախատեսված HYUNDAI H-1 TQ /միկրոավտոբուս/ vin-KMJWA37RAAU231589 2010թ. համար, կոդը՝ 54840-4H000	հատ	2	10800	21600
218	Անվակունդի հեղյուս և մանեկ	Նախատեսված HYUNDAI H-1 TQ /միկրոավտոբուս/ vin-KMJWA37RAAU231589 2010թ. համար	հավաք ածու	15	6300	94500
222	Մեքենայի սրահի ջեռ. կառավարման վահանակ	Նախատեսված HYUNDAI H-1 TQ /միկրոավտոբուս/ vin-KMJWA37RAAU231589 2010թ. համար	հատ	1	60000	60000
230	Թերմոստատ	Նախատեսված HYUNDAI COUNTY /ավտոբուս/ 3.9 vin-KMJHG17C2CC053087 2011թ. համար	հատ	1	13500	13500
237	Արգ. կոճղակներ առջևի	Նախատեսված HYUNDAI COUNTY /ավտոբուս/ 3.5 vin-KMJHG17FPCC056948 2012թ. համար	հավաք ածու	1	100800	100800
238	Արգ. կոճղակներ հետևի	Նախատեսված HYUNDAI COUNTY /ավտոբուս/ 3.5 vin-KMJHG17FPCC056948 2012թ. համար	հավաք ածու	1	100800	100800
239	Լեռնային արգելակ	Նախատեսված HYUNDAI COUNTY /ավտոբուս/ 3.5 vin-KMJHG17FPCC056948 2012թ. համար	հատ	1	135000	135000